

## ԿԱՐԾԻՔ

Սարգիս Վանյայի Փահլևանյանի «Ավագ դպրոցում ֆիզիկական դաստիարակության ժամանակակից տեխնոլոգիայի մշակման գիտատեսական հիմունքները» թեկնածուականատենախոսության մասին

Ֆիզիկական դաստիարակության համակարգում առողջությունը դիտվում է որպես մանկավարժական համակարգ, որի բաղադրատարրերը ձևավորվում են հատուկ կազմակերպվող, նպատակաուղղված մանկավարժական գործընթացի շնորհիվ և պահանջում է գործընթացի գրագետ կազմակերպում:

Ֆիզիկական զարգացման նպատակն է առողջության պահպանումն ու ամրապնդումը, առողջ ապրելակերպի հաստատումը:

Առողջությունը զուտ ֆիզիկական հասկացություն չէ, այն ընդարձակ ու բարդ կառույց է և իրենից ներկայացնում է մարդկային որոշակի ապրելակերպ՝ պայմանավորված անձնավորության ֆիզիկական մշակույթով:

Ֆիզիկական դաստիարակության համակարգն ունի կրթական խնդիրներ և մշակում է զարգացման ուղիներ, հիմնավորում դրանց կազմակերպման եղանակները, հաշվի առնելով կենսաբանական զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկությունները, ինչպես նաև բնութագրում է բարձրագույն նյարդային գործունեության դերը մարդկային վարքի և գործունեության կարգավորման գործում:

Սակայն օրգանիզմի կենսագործունեությանը բնորոշ է չափազանց բարձր համագործակցություն օրգան համակարգում:

Հարցերի այս ընդհանուր շրջանակի մեջ պետք է դիտել քննարկման ներկայացվածատենախոսության թեմայի արդիականությունը, գիտական մակարդակն ու որակը, տեսական ու գործնական նշանակությունը:

Վերոհիշյալ համատեքստում հեղինակը համալիր քննություն է կատարելատենախոսության նյութ դարձնելով ֆիզիկական դաստիարակության, ֆիզիկական զարգացման տեղն ու նշանակությունը նոր սերնդի առողջ ապրելակերպի կայացման, ձևավորման, համակողմանի և ներդաշնակ զարգացման գործում՝ տնտեսվարման նոր համակարգի պայմաններում:

դաստիարակության ժամանակակից տեխնոլոգիայի գիտատեսական հիմունքների մշակմանը:

Ֆիզիկական դաստիարակությունն ու սպորտը մարդու ֆիզիկական և հոգևոր ոլորտների վրա դաստիարակչական և կրթական տարաբնույթ ազդեցությունների միջոցներ են, ինչը թույլ է տալիս լուծել անձի բարոյական գիտակցության և վարքագծի ձևավորման խնդիրները: Բարոյական պահանջներին համապատասխանող բարոյական գիտակցության և վարքագծի ձևավորումը դարձել է ատենախոսի տեսական հետազոտության գլխավոր նպատակը:

Ատենախոսության թեման հրատապ է և արդիական:

Ատենախոսը քննության փաստական նյութը հավաքել է սկսած 2009 թվից: Հետազոտությունն իրականացվել է 4 փուլով: Մշակվել է ավագ դպրոցի կրթական համակարգում սովորողների առողջ ապրելակերպի ձևավորման մանկավարժական պայմանները և առանձնահատկությունները ու այդ գործընթացի կառավարումը: Փորձարկման գործընթացն իրականացվել է աշխատանքում ներկայացված փուլերին համապատասխան: Քննության առարկան ակներև դարձնելու նպատակով հեղինակը հիմնախնդիրներն արդիականացրել է աշխատանքում ներկայացված վիճակագրական տվյալներով:

Ներածությունում հիմնավորված է ուսումնասիրվող թեմայի կարևորությունը, արդիականությունը: Ներկայացվել են հետազոտության օբյեկտը, առարկան, հիմնական վարկածը: Ձևակերպվել են աշխատանքի նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Առաջադրվել են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, որոնք աշխատանքում ստացել են համապատասխան բացահայտումներ:

Ատենախոսության առաջին՝ «Ֆիզիկական դաստիարակության և սպորտի միջոցով Հայաստանի Հանրապետության ազգաբնակչության ֆիզիկական և հոգեկան առողջության հիմնախնդրի մշակման և լուծման մեթոդաբանական հիմունքները» գլուխը բաղկացած է 3 ենթագլուխներից, որոնցից վերլուծվում և քննության է առնվում.

▪ Ֆիզիկական դաստիարակության կարևորությունը Հայաստանի ազգաբնակչության ֆիզիկական և հոգեկան առողջության ապահովման գործում:

- Ֆիզիկական դաստիարակության կարևորությունը Հայաստանի ազգաբնակչության ֆիզիկական և հոգեկան առողջության ապահովման գործում:

- Տրված է բնակչության ֆիզիկական և հոգեկան առողջության ապահովման մանկավարժական հիմնախնդրի լուծման կարևորությունը:

- Ֆիզիկական դաստիարակությունը որպես երիտասարդության սոցիալական ակտիվության բարձրացման գործոն և դրա ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա:

Ատենախոսը հիմնավորում է, որ առողջության հիմնախնդիրը մարդկային կապիտալի ամենակարևոր բաղադրիչն է, որն էական ազդեցություն է ունենում երկրի սոցիալ-տնտեսական զարգացման վրա, հետևաբար անհրաժեշտ է արդիականացնել սովորողների առողջության պահպանմանն ուղղված տեխնոլոգիաները:

Համապատասխան փաստարկներով ատենախոսը հիմնավորում է, որ կրթական հաստատություններում առաջնահերթ խնդիր պետք է լինի ուսուցման և դաստիարակության գործընթացում առողջության պահպանման տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ միջոցների համալիր պայմանների ստեղծումը: Այն է՝

- ֆիզիկական կուլտուրայի կրթական համակարգի որակի ապահովման հայեցակարգային մոտեցումները,

- կրթական որակին ներկայացվող արդիական պահանջները աշխատանքում դարձել են քննարկման թեմա:

- Որակի ապահովման նպատակով առաջադրվել են մանկավարժական մի շարք պայմաններ, և դրանց իրականացումը ատենախոսը հիմնավորում է ավագ դպրոցում ֆիզիկական դաստիարակության ժամանակակից տեխնոլոգիայի մշակման կարևորությունը և առաջարկում առավել արդյունավետ կրթական նորարարական տեխնոլոգիաները կիրառել գործնականում:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ «**Ֆիզիկական կուլտուրայի ձևավորման տեխնոլոգիան ավագ դպրոցում**» խորագրով, բաղկացած է 3 ենթագլխից:

Ուսումնասիրվել է ավագ դպրոցականների տարիքային առանձնահատկությունների հաշվառումը ֆիզիկական դաստիարակության գործընթացում, ավագ դպրոցական տղաների և աղջիկների զարգացման ընթացքը, ֆիզիկական տարբեր ընդունակությունների աճի տեմպերը:

Համապատասխան փաստարկներով տրված է ֆիզիկական դաստիարակության նպատակները, խնդիրները, միջոցները և մեթոդիկայի առանձնահատկությունները ավագ դպրոցում:

Ատենախոսության հեղինակը ներկայացնում է ֆիզիկական դաստիարակությունն ապահովող մեթոդների, միջոցների ու ձևերի համակարգը, ինչպես նաև արտասահմանյան և հայ մանկավարժների մոտեցումները և այն սկզբունքները, որոնց հիմքում ընկած են բարոյականային և ֆիզիկական հատկանիշների զարգացումը՝ ինքնաճանաչում, ինքնագիտակցում, ինքնազարգացում:

Ատենախոսը ուսումնասիրել է անցյալի և ներկայի դասական մանկավարժների (Յան Ամոս Կոմենսկու, Ա.Ս. Մակարենկոյի, Վ. Բեսկալտոյի, Ն. Շչուրիկովայի, Ի. Պողլասի) մոտեցումները մանկավարժության մեջ «Տեխնոլոգիա» հասկացության բովանդակությունը, և տվել նորարական մանկավարժական տեխնոլոգիաների ներդրման անհրաժեշտությունը ֆիզիկական դաստիարակության գործընթացում:

Առաջարկում է ֆիզիկական կուլտուրայի ձևավորման տեխնոլոգիան մշակելիս հաշվի առնել ավագ դպրոցականների մտավոր, բարոյահոգեբանական, բարոյականային, ֆիզիկական ունակությունները, առողջական խնդիրները և հոգեբանական անհատական հատկությունները:

Ընդհանրացնելով առողջապահական տեխնոլոգիաների բազմագործոն մոդելը, հեղինակը առողջության պահպանումը դիտարկել է 3 հայեցակետով՝ հոգևոր, ֆիզիկական և սոցիալական:

Ատենախոսության երրորդ՝ «Որովայնային մամլակի մկանային համակարգի զարգացման տեխնոլոգիայի ստեղծումը և կիրառումը ֆիզկուլտուրայի դասերին» գլուխը բաղկացած է 4 ենթագլխից:

Այս կարևոր և հրատապ պրոբլեմի ուսումնասիրությունները վերաբերում են հատկապես ավագ դպրոցում (և ինչո՞ւ միայն) սովորող աղջիկների ֆիզիկական պատրաստականությանը:

Աշխատանքի հեղինակը ստեղծել է ավագ դպրոցում սովորող աղջիկների որովայնային մամլակի մկանային համակարգը ձևավորող և զարգացնող տեխնոլոգիայես կատարելագործված նոր մարզասարք:

Կարևորելով պրոբլեմը՝ ատենախոսը պարզաբանում և առաջարկում է, որ աղջիկների ինքնուրույն մարզումների կազմակերպումը պետք է ունենա նպատակաուղղվածություն՝ հաշվի առնելով նրանց ֆիզիկական ունակությունները, հակումները, առողջական խնդիրները, հոգեբանական անհատական հատկությունները:

Առաջադրված խնդիրները լուծելու և դրված նպատակին հասնելու համար առաջարկում է էքսպրես-վերահսկման միջոց, որը ներառում է 11 թեսթ:

Ֆիզկուլտուրայով աղջիկների զբաղվելը ինքնուրույն մարզումները կնպաստեն հետագայում նրանց առողջության, տեսակի վերարտադրման և հետագա գործունեության համար:

Ատենախոսի գյուտի էությունն այն է, որ տալիս է նոր ու լրացուցիչ տվյալներ ավագ դպրոցի աշակերտուհիների որովայնային մամլակի տարածված թերզարգացվածությունը և դրա կանխման ու վերացման հնարավորությունները:

Գյուտը վերաբերում է սպորտի բնագավառին և պետք է ընդունվի և կիրառվի ոչ միայն ավագ դպրոցում, այլ ուսումնական հաստատություններում:

Մարզասարքի պաշտոնական և մասսայական ներդրումը ուսումնական հաստատություններում, ինչպես նաև անհատական օգտագործումը կնպաստի առողջության պահպանմանը և ֆիզիկական կուլտուրայի ձևավորմանը: Առաջարկությունը բոլոր ժամանակներում և բոլոր տարիքների, մասնավորապես աղջիկների համար կարևոր է:

Ֆիզիկական կուլտուրայի ձևավորման, կրթադաստիարակչական գործընթացի ոչ բավարար արդյունավետությունը, համակարգի թերզարգացվածությունը, աշակերտուհիների անբավարար տեսակետն գիտելիքները չի նպաստում, որ նրանք միշտ ինքնուրույն զբաղվելու ցանկություն ունենան: Դժվարը սկսելն է, որի համար սովորողները պետք է հոգեբանորեն պատրաստ լինեն մասնավորապես աղջիկները գիտակցեն դրա անհրաժեշտությունը:

Աշխատանքի հեղինակը անդրադարձել է նաև վերոհիշյալ պրոբլեմին:

Հիմնախնդիրներն արդիականացվել են աշխատանքում ներկայացված վիճակագրական տվյալներով: Այս պարագայում խիստ արդիական են դառնում նման ուսումնասիրությունները, որոնց տվյալները կօգտագործվեն հավուր պատշաճի:

Ըստ արժանվույն գնահատելով ատենախոսության դրական կողմերը, նորարարությունը՝ ունենք մեկ-երկու մասնակի դիտողություններ, որոնք հանձնում ենք ատենախոսի ուշադրությանը□

1. Աշխատանքի ներքին տրամաբանական ամբողջությունը կպահպանվեր, եթե հիմք ընդունվեր ֆիզիկական զարգացման տարիքային բնականոն ընթացքը:
2. Ինչպես ապահովել մարզասարքին տիրապետող և համապատասխան որակավորում ունեցող մարզիչ-մանկավարժների առկայությունը, որովհետև մարզասարքերի սխալ օգտագործումը կարող է ոչ միայն օգուտ չտալ օրգանիզմին, այլև վնասել:
3. Մարզասարքի կառուցվածքի բացատրությունը հետաքրքիր է, դրանից օգտվելը պետք է դառնա անհրաժեշտություն ոչ միայն ավագ դպրոցականների, այլ սկսած 13-14 տարեկանների համար:


Վերոհիշյալ դիտողությունները պայմանավորված են մեր մոտեցումներով, և էականորեն չեն ազդում աշխատանքի ընդհանուր որակի վրա: Նկատենք, որ ատենախոսը գիտական հանդեսներում հրապարակել է 10 հոդված, որոնք արտացոլում են ատենախոսության բովանդակությունը:


Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Բոլոր գլուխներն ունեն եզրակացություններ, որոնք աշխատանքի վերջում ընդհանրացված են որպես ամփոփում: Ամփոփման մեջ հանրագումարի են բերված ատենախոսության դրույթները և արված են ուսումնասիրությունից բխող համապատասխան եզրակացություններ: Դրանք բխում են քննության արդյունքներից, հիմնավորվում են տեսական ճիշտ վերլուծություններով և փաստական հարուստ նյութով: Առանձին դեպքերում կազմվել են տրամագրեր (զծապատկեր): Շարադրանքի լեզուն լիովին բավարարում է նմանատիպ աշխատանքից պահանջվող աշխատանքի մակարդակը:

Ելնելով վերոգրյալից, փաստենք, որ Սարգիս Վանյայի Փահլևանյանի «Ավագ դպրոցում ֆիզիկական դաստիարակության ժամանակակից տեխնոլոգիայի մշակման գիտատեսական հիմունքները» թեկնածուական ատենախոսությունը ինքնուրույն, գիտական պատշաճ մակարդակով արված գյուտարարություն է, ունի գիտամեթոդական և գործնական լուրջ նշանակություն և բավարարում է ՀՀ -ում

գիտական աստիճան շնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և համապատասխանում է ԺԳ.00.01. «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ թվանիշին, ուստի նրա հեղինակին կարելի է շնորհել մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, որին նա արժանի է:

Պաշտոնական ընդդիմախոս՝  մ.գ.թ., դոցենտ **Լիզա Հարոյան**  
Լիզա Հարոյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՎՊՀ գիտական քարտուղար, մ.գ.թ., դոցենտ՝  **Սեդա Բեժանյան**